




ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պագար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպոսի համար տեղի. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

«ԺԱՄՈՒԳ»

Չենք գիտեր ինչու կարգ մը գրողներու
գրչին ծայրը «ամական քսան տակի» ու «ժա-
մուց» ի նիւթապաշտ բացատրութիւնները կու-
գան, երբ միտքերնին կէնայ խօսիլ Եզիպոսի
առաջնորդութեան վրայ: Այս անգամ ալ, Պա-
սական թերթ մը, իմացունելով իր ընթեր-
ցողներուն թէ «Եզիպոսականները հոգի կու-
տան Եզիպոսի համար», նոյն բանը կրկնած
էր իր ամենէն լայն առումին ու խորթ ձեւին
տակ:

Եզիպոսականներու հոգին խորը թա-
փանցելու գերմարդկային զօրութիւնը չունինք,
գիտնալու համար թէ արդարեւ ա՞յդ է գի-
րենք օրօրող երազը, երբ գալ փակուիլ կ'ու-
զեն Պէնի-Սուրէնի ամրոցին մէջ, բայց տեսնա-
նք առաջնորդներ որոնք ո՛չ միայն «ժամուց»ը
արհամարհեցին, այլ և իրենց հոգիէն, — ու
քիչ մնաց մարմնէն ալ, — մաս մը թողնելով այս
ձգողական հոգին վրայ, հեռացան:

Անձնութեան անդու անդադար աշ-
խատութեան ու արդիւնալից առաջնորդու-
թեան տիպար հանգիսացող այսպիսի հոգե-
ւորականի մը ըմբռնումը ըլլալու է հա՛մ ու-
ղեգիծը այն Գերապատիւներուն որոնք էտիր-
նէի կամ Զարանճագի վիճակներէն նախա-
պատիւ կը համարին Եզիպոսի աթոռը որ
երեւակայութեան չափ կակուղ չէ սակայն:

Իրա՛ւ, այստեղի հայ գաղթականութիւնը
ստուար թիւ մը չի կազմեր, բայց այնքա՛ն
խառն տարրերէ բաղկացած է, այնքան այլա-
զանութիւններ կը ներկայացունէ բարբերու
և բնաւորութիւններու և այնքա՛ն նմայշներ
ունի քաղքինի, գաւառացի ու գիւղացի տի-
պարներու, որ շատ աւելի դժուար է զայն
խղճմտօրէն կառավարելը քան բազմամարդ-
թեմ մը որուն ժողովուրդը ամբողջ բաղկացած
ըլլար ընկերներէ, «մի հօտ, մի հովիւ»:

Եզիպոսի առաջնորդութեան միակ հրա-
պուրիչ կողմը, եթէ երբէք հրապուրիչ կողմ
մը ունի իրականութեան մէջ, Թուրքիոյ ո՛րեւէ
գաւառի առաջնորդութենէն անբաժան եղող
«յարարեալական» խնդիրներու, խոշտանգում-
ներու, սրտադողբու չգոյութիւնն է. սակից
դուրս՝ բարոյական մեծ գործ և լուրջ աշխա-
տութիւն կայ կատարելիք. առաջնորդ մը
պէտք է գիտնայ արդիւնաւորել այն բարի-
կամեցողութիւններն որոնք չեն պակսիր ընդ-

հանրապէս, պէտք է մտաւորապէս համեմա-
խութեան ու միաբանութեան հոգին պարծարծէ
զարգացեալին ու ռամկին, ազքատին ու
հարուստին միջեւ հաւասարապէս. մայրենի
լեզուն, մայրենի գաղափարակութիւնը չեն ա-
ւանդուած ու չեն աւանդուիր այնպէս ինչպէս
որ փափագելի է մեզի պէս զժգաղդ ու ցըր-
ուած ազգի մը որ շատ բան կը սպասէ նոր
սերունդէն: Օտարամոլութիւնը խոր արմատ-
ներ ձգած է այս երկրի հայութեան մէջ, որ
Ափրիկէ ու Եւրոպա է միանգամայն:

«Ժամուց»ը չէ և «ժամուց»ը պէտք չէ
ըլլայ — եթէ արդարեւ այսպէս մտածողներ
կան, — մտատիպարը այն եզիպոսականներուն
որոնք կը փափագին Եզիպոսի առաջնորդ-
ընտրուիլ: Եզիպոսի հայութիւնը, երբ հաս-
նի ընտրութեան համար որոշուած թուականն
որ շատ հեռի չէ, ապահով ենք թէ պիտի
գիտնայ իր ձայնը միացունել այն եզիպոսա-
կաններէ մէկուն վրայ որ գերիվեր ըլլայ այդ-
տեսակ վերագրումներէ, ու կատարէ ընտ-
րութիւն մը, պատուաբեր՝ ընտրեալին ու
խօստմնալից՝ այս կարեւոր թեմին համար:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Թայմիլիս քարիզեան թղթակից Պ. ՏՐ.
Պոլիճի Պերիկէ վերադարձող «քարճաւա-
սիճան անձի մը» քերեկէն ֆաղեր է հետեւ-
եայ տեսութիւնները գործ Գերմանիոյ կայսրը
պարզեր է եղեր օրուան ֆաղափականութեան
վրայ, այդ անձին հետ ունեցած մէկ տեսակ-
ցութեանը միջոցին:

Թուրքիոյ երկրակալն պատեալով Վրայ
խօսելով Վիլհելմ կայսրն ըսէր է.

Թուրքիոյ երկրակալն ինդոյն աթիւ ըստեցաւ
արդէն թէ քանի որ Եւրոպան էր թեաւ խառն Զու-
նաստանի տուողը, և քանի որ այս պատերազմին մէջ
Եւրոպան չէր յաղթուողը, ուստի չի կրնար հոն
դուրս ելլալ որ Թուրքիոյ վերստին ձեռք ձգէ ինչ որ
Յունաստանի շնորհուած է Պէրլինի վեհաժողովին
միահալոյն կարողութիւնը: Կարգ մը մարդեր կը լսէք
որոնք կըսեն — «Բայց ո՞վ պիտի հարկադրէ Թուր-
քիան» թեաւ խառն հրաժարելու: Այդ, կրնայ
պատասխանուիլ այդպիսիներուն թէ Ռուսիա, 1878ին
շատ աւելի զօրաւոր էր քան ինչ որ չէ այժմ Թուրքիա
և Պոլիսը բռնած էր այն լծակին մէջտեղ որուն
երկու ծայրերը կը կազմէն Սեւանի և Պարթիսի:
Եւ սակայն Եւրոպա, միմիայն բարոյական ճնշումով
մը, հարկադրեց զայն՝ այդ գրաւումը թողնել: Եւրո-
պայի բան մը չի կրցու ընել, այսօրուան Թուր-
քիան բնաւ չի պիտի կրնայ ընդդիմանալ: Ասկից
զատ, Ապտուլ-Համիտ բուական փորձառու քաղա-

քաղաւ մըն է գիտնալու համար թէ Եւրոպա չի
կրնար վայրկեան մը իսկ տեղի տալ այս կետին
վրայ:

Ոչ, Սուլթանը չ'ա'տ լաւ գիտէ թէ ո՛չ Գերմանիա
ո՛չ Ռուսիա ուժ չի պիտի տան իր յաւակնութիւն
ներուն ի մասին թեաւ խոյ: Ոչ, Ապտուլ-Համիտ
ազգից աւելի նրբին մտադրութիւն մը ունի իր փա-
փագածը, իր հետագնդածը՝ Եւրոպան բաժնել է,
յուսաւոր իր նպատակին հասնիլ՝ անհամաձայնութիւն
ստեղծելով: Իր ամբողջ բաղաբականութիւնը ասոր
մէջ կը կայանայ: Հոն է իր ուժը: Վասն զի, դիտե-
ցէք որ, եթէ Ռուսիա այս տեսակետով անոր հա-
մաժող գտնուիլ ձեւացունէ, Ֆրանսա՝ հակառակ իր
բոլոր դաշնագիրներուն՝ չի կրնար Ռուսիոյ հետեւիլ:
Ֆրանսա չի պիտի կրնայ հանդուրժել որ Թուրքիան
տիրանայ թեաւ խառն: Այդ պարագային մէջ, եւ-
րոպական համաձայնութեան մէջ խղճով յառաջ կու-
գայ և Սուլթանին քաղաքականութիւնը կ'օգտուի
անկից: Բարեբաղդաբար, ստանի պատահականութե-
նէ մը երկիւղ չի կայ: Եւրոպան միացած կը մնայ և
եթէ Սուլթանը իր յայտ տեսնանայնութիւններու
վրայ դրած է, ապահով եմ որ կը սխալի և թեաւ
լից խնդրոյն մէջ ո՛ր և է նեցուկ չի պիտի գտնէ:

Ֆրանսայի եւ Գերմանիոյ յարաբերու-
թեանց վրայ խօսելով, Գերմանիոյ Կայսրն
ըսէր է, — միշտ ռուս յայտարարութեան Պ.
ՏՐ Պոլիճի եւ իր Պերիկէ դարձող խօ-
սակցին:

Չեմ գիտեր թէ Ֆրանսայիները ինձմէ ի՞նչ կու-
զեն. ես չէի իրաց արդի վիճակն ստեղծողը. ժա-
ռանգութիւն մըն էր այս և ոչ ոք կրնայ մեղադրել
զիս՝ զայն ընդունած ըլլալու համար: Աս այն տե-
սակ բան մը չըրի որ ինձի թողած կացութիւնը
ծանոթացնեմ, այլ անոր հաւատարմի՝ ու երկիւղած ա-
ւանդապաշտ եղայ. սակայն Ֆրանսայիներն ինձի
զէմ վրէժ ունին, իբր թէ ես եղած ըլլայի բոլոր
աղէտներուն հեղինակը և կացութիւնը բարեբե-
համար բրած բոլոր ջանքերս ի գերեւ կը հանեն:
Այս տեսակ բարեբեհամարի մը շատ բարեբար հե-
տեւանքներ կրնար ունենալ երկու երկիրներուն հա-
մար: Այս նպատակով էր որ փորձեցի Ֆրանսայի հետ
միահաղոյն հետեւել ընթացք մը գտնել տեսարա-
կան, ճարտարարուեստական ու տնտեսական խըն-
դիրներու մասին: Բայց ոմանք վիս ընդունեցին՝ ան-
կարող մարդերու յամառութեամբ, ուրիշներ՝ ին-
չոյցի մարդերու սիրաշահութեամբ, առանց սակայն՝
խորհուրդ մը իրազօրծելու համար պէտք եղած քա-
ջութեամբ կամ ազգայնութեամբ: Այս պայմաննե-
րու մէջ, պէտք է թողնու որ իրեն իրենց բնական
ընթացքին հետեւին և սպասել որ ժամանակը բեր-
այն լուծումները որոնք չեն կրնար ցոյց տրուիլ հի-
մակ:

Գաղով ֆաղափականութեան ընդհանուր
կացութեան, Վիլհելմ Բ. անկիցական շփո-
քութեան երկիւղ չի տեսներ. ընդհանրա-
կը կը հաստատէր քէ անկէ ո՛վ փափաքող է
շփոքութիւններէ խոյս տալու:

Իսկ Եւրոպայի ապագայի մասին նուազ
ապահով է. վստահ չի կրնալ, իր տեսու-
թեամբ:

Մէկ կողմէ, կ'ըսէ, վտանգալից կը գտնուի եւ ըստական ազգերէն մէկուն (Անգլիոյ Թոմարիկէ կ'ըսէ) յարատեւ սպառնալիքներ, ու միւս կողմէ՝ միջամտութիւնը նոր աշխարհին որ մինչեւ ցարդ թարուն մնայած փափագներ երեւան կը բերէ ու շատ չանցած պիտի յաւանքի հին աշխարհի դործեւ ընտ խոտնուիլը Ասոր համար է որ իմ մտքս ան- ցած չեն բնաւ այն փառատենջ ճգտումները զորս ինձ կը վերագրեն անոնք իսկ որ Եւրոպայի խաղաղութ- թիւնը վրդովել կ'ուզեն՝ պատրուակելով թէ ես եւս գայն խանգարել ուզողը:

Գերմանիոյ կայսեր այս իրաւ կամ եւն- քադրական խօսակցութիւնը անբողջ աշխար- հի յրազրութեան շրջանը կրնէ այս պահուս եւ դիւանագէտներուն ուշադրութեան առաւ- կայ կը դառնայ: Փրանսական մարմնի այն- քան կարեւորութիւնը ընծայեց անոր, որ է՝ կարեւորագոյն քերթեր գայն իրենց խըմ- քադրականի նիւթը ըրին, Ալգաս-Լորէնի խնդիրն առաջ անցունելով՝ իբրեւ պատուա- րեկու ազգերուն միջեւ մերձեցման մը եւ ֆի- կարօ խնդիր մը խնդրէ է Պ. Եր. Պոլի- ճի մօտ որ պնդէր է իր տեղեկութեանց վաւերականութեանը վրայ, աւելցունելով քէ Պերիլեն վերադարձող անձը ուսկից ֆա- դեր էր այս խօսակցութեան արձագանգը, Փրանսացի մըն էր: Գերմանիոյ քերթերը տակաւին չի հերձեցին այս յայտարարութիւնը:

ԿԵԱՆՔԻ ՄՐՅՈՒՄԸ

Բարոյական աշխարհը կամբողջացնէ ֆի- ղերական աշխարհը: Այս կրկին կարգերը կը հնազանդին միեւնոյն անյեղի ու տիեզե- րական օրէնքներուն, բնութեան օրէնքները կը տիրեն բացարձակապէս նաեւ մարդկային ընկերութեան մէջ ու ասոնց պէտք է դիմել ընկերական երեւոյթներու մեկնութեան հա- մար: Այս ճշմարտութիւնն է զոր Դրականու- թիւնը, արդի մտածումին ամենէն լայն ու ամենէ հզօր տարրը, կընծայէ մեզի, մութ հարցերու լուսաւորման համար:

Ինչպէս, Վոնտէ, Սթենսըն եւ գերման բժիշկներ, զուտ փորձառական մէթոտով, բնախօսութեամբ մեկնեցին հոգեբանական ի- ըրողութիւնները: Թէն, Ինստիտուտական հեղինակը, կիրարկեց զայն պատմութեան ու զրական քննադատութեան, եւ այսօր բնապաշ- տական դպրոցը անոր ընդարձակ ու ճոխ փթթումն է: Այս սկզբունքէն պէտք է մեկնիլ նաեւ հասնելու համար բարոյագիտական ճշ- մարտութեանց. ու ասոնց մէջ կըմբռնուի տըն- տեական կարգը:

Արդ, ո՞րն է յաջողութեան ճամբան: Այս բառով կը կոչուի այն իրողութիւնը որ է տարբեր բնութեամբ տարրերու գործակ- ցութիւնը միեւնոյն արդիւնքը արտադրելու համար. այս իսկ է զոր կանուանենք բնական ներդաշնակութիւնը, ուրեմն բնութեան մէջ ալ կայ յաջողութեան երեւոյթը: Արդարեւ հոն ալ կայ կեանք մը որ իր պայքարը ունի, եւ անսահման կեանք մը եւ ճակատագրական պայքար մը: Մըցումը որ կը մղուի հոն ամենէ վայրագն ու ամենէ յուսահատն է. անհասար- ութեւր կան, ասպարէզին վրայ, ճակատ առ ճակատ. նպատակը զոր կը փառասիրեն տեն- դագին, կեանքն է. տարբերութեւն տենջը մղում կուտայ անոնց. պատերազմը տիեզե-

րական է ու յաւիտենական: Բայց ապրումով միջոցները եւ անհատները անհասարար են թուով, պէտքերը չափազանց են ու գոհացում- ները անբաւական. այս անհամեմատութիւնն է աղէտըին աղբիւրը. ուստի մարտիկ տար- րերուն մէջ մասը անհրաժեշտ է որ ջնջուի: Այսպէս տկար տեսակները՝ կը ջնջան հե- տըզհետէ տեղի տալով զօրաւորագոյններուն որոնք, յաղթական եւ տէր ապրումով միջոց- ներուն, կը զարգանան:

Անհատներու մէջ մասին այս ճակատա- գրային անհետացումը, ճարվիրի համեմատ՝ անխուսափելի հետեւանքն է այն իրողութեան որուն համեմատ բուսական աշխարհը կաճի թուաբանական յառաջադիմութեամբ եւ կեն- դանականը՝ երկրաչափական յառաջատուու- թեամբ:

Այս ցաւագին տեսարանը կընծայէ մեզ նաեւ մարդկային ընկերութիւնը:

Անցնինք նուազ փոքր բայց աւելի սուր կռիւին որուն ակնհասեա ենք մեր առօրեայ կեանքին մէջ: Հոս տկարութիւնը եւ զօրու- թիւնը կը կայանան նպատակաւ միջոցներու եւ անհրաժեշտ պայմաններու մէջ: Ինչպէս որ հունտի մը զօրօրինակ լողողման համար ան- հրաժեշտ են լոյս, ջուր, սաքութիւն, նմա- նապէս յաջողութիւնը կեանքի մէջ կը կարօ- տի երկու էական պայմաններու. կորով ֆի- ղերականի ու մտքի: Ակնարկ մը նետելով ի- ըրողութեանց վրայ, կը տեսնենք որ, կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ, անոնք աւելի հա- սած են յաջողութեան կատարը որոնք լախ- տին բարեկամներն եղած են անով որ բնու- թիւնը զիրենք օժտած է կորովի մարմնով մը:

Բայց առնելով հռչակաւոր զօրականները, որոնք մկանային տարօրինակ ուժ մը կը տը- րամագրեն նոյն իսկ եւ մանաւանդ ճշմարիտ է ասիկա աղատ ասպարէզներուն համար. ա- ուղջ միւսը աւուղջ մարմնի մէջ. արդարեւ մոռաւորական աշխատութիւնը ֆիզիքական ու- ժերու սպառումը կանհրաժեշտէ. հիւանդ մարմինը կը ծառայեցնէ միւսը՝ որտիւ անու- լոյ ու տարտամ վիճակները սեւեռելու, զոր օրինակ Բարալ: Ընդհակառակը, Ուոլթըր Աթօթ, Լուսեր, Պալլաք, որոնք զրական ըն- դարձակ ու հսկայ արտադրութիւններ ըրին, նշանաւոր էին իրենց հոսիկու կազմութեամբ. այսպէս, թէ՛ մոռաւորական եւ թէ՛ մկանային ասպարէզներուն մէջ, յաջողութեան էական պայմանն է զօրաւոր մարմին մը, կարող յա- մառօրէն սովալու յարատեւ, անդու, եռան- դուն աշխատութեան: Կուլեմը զօրացնելալ- գային ընդհանուր նկարագիրը. խնամենք ու- ընմն նոր սերնդին ֆիզիքական դաստիարա- կութիւնը, ու չափաւորենք դպրոցական ծը- րագիրները՝ քիչ, բայց լաւ, կըսէ առաժը:

Բայց ֆիզիքական ուժերուն մեքենալա- ըր միտքն է. եւ սա, այն կարողութիւնը զոր կը քաղէ առաջիններէն ու կիրքերու աղբիւ- ըն, կաճեցնէ արտաքին իրերու ծանօթու- թեամբը. զիտնայը կարենալ է, կըսէ Պաթօն. եւ իրաւ գիտութիւնը հոմանիշ է զօրութեան. որքան ծանօթանանք բնութեան զաղանիքնե- րուն, այնքան մեր իշխանութիւնը անոր վրայ կաւենայ. նմանապէս, որքան մարդ վերա- հասու ըլլայ գործնական աշխարհի համալսա- ընին ծանօթութեանց այնքան զօրութիւնը

կաւենայ, այնքան բաղդ ունի կեանքի կռի-ւին մէջ:

Լայն գիտակցութեամբ մը լուսաւորուած ու նպատաւորեալ մարմնի մը ընկերացած հզօր կամքն է որ անհատին յաջողութիւնը կապահովէ, եւ փողփողուն խեղալով մը կաս- տեղալարէ մութ ու թաղծախից հոգին: Ա. ճ.

ՔՐՕՆԻԿ

Ուրիշ երկիրներու մէջ գարունը եւ աշունը ծի- ծեռնիկներու երթեւեկութեան հետ սերտ առնչու- թիւն ունին. այնպէս որ եթէ տարի մը ծիծեռնիկ- ները իրենց ձմեռնային ալ չեն գիտեր որ ապա- տանին մէջ, լաւ ընդունելութիւն մը գտնելով որո- չէին ամառն ալ հոն անցնելու ուրիշ երկիրներու բը- նակիչները գարունը ի զուր պիտի սպասէին: Անու- նին համար ալ նոյնպէս:

Հոս, բարեբաղդաբար, եղանակներու փոփոխու- մը կամ յաջորդութիւնը ծիծեռնիկներու պտուղիկ ուղեգէն կախում չունի:

Եւր լըրտերը, թուրքները, թուրքաւորներն, ինչպէս, հարուստ դատարկապարտները մեր օթէները գարգարել կուգան, առանց սխալելու կրնանք ըսել. հէ՛, ձմեռը եկեր է:

Իսկ երբ եղիպատեան դրամի տղնուտպետակա- նութիւնը կառնէ կը քալէ, քաղաքը մեզի հօգելով, առանց սխալելու, գաղափարի յաւակնաւորութեամբ կրնանք բացառապէս — Ու՛ֆ, ամառը եկաւ:

Այս պահուս եղիպատու այդ սեգօնին մէջն է:

Հարուստները, անոնք մը ունեցողները, գեղե- ցիկ կիները, հեազհետէ մեզ կը լքանեն եւ Նեղոսի հովիտը մեզի կը թողնու:

All right. Հեռաւարտ օրուան մարդիկը մուրալիսներն են: Կարգաւոր Պաեսօնակիւն Լապիւր եւ տեսէթ թէ որքան ճիշդ է բաժան:

Եղիպատեան կառավարութիւնը նկատելով որ այդ ուղորակի կաններն ալ սրտաւոր քաղաքացի- ներու մէջ մասը կը կազմեն, անոնցմով զբաղելու ա- տանցով ալ օգուտ մը քաղելու ուզեց եւ . . . կանոնա- գրի մը տակ առաւ այդ ցնցոտիներու ասպետու- թիւնը:

Երկու օրէնքներ շինուցան, մին՝ Ալեքսանդրիա եւ միւսը Փաշիքէ:

Երկուքն ալ իրենց տրամադրութիւններուն մէջ շատ հետաքրքրական կէտեր կը սրտաւորակեն:

Ալեքսանդրիային սկիզբը:

Մուրալիսները հարուստ թաղերու մէջ չեն կրնար պտուղ մուրալու համար:

Մէհմետ-Ալիի հրապարակը, Եւրիֆ փաշայի փողոցը, Բուսիկի եւ Քոմ-Է-Տիգի պողոտաները, Աթթարի, Սարաֆիէն, Թէվֆիկ փաշա փողոցը Մուհարրէմ փէյշա զոց պիտի մնան մուրալիսնու- թեան առջեւ, հետեւաբար ազգաւորներ իրենց ար- հետը կրնան ի գործ գնել միմիայն Քոմ-Է-Շուկա- Փաի, Քարաւոսի եւ կամ ասոնց պէս տեղերու մէջ — ուր, գործանալի չէ — բնակիչները մուրալիսներն թէ տարբերութիւն չունին: Այս տնտեսութիւնը պարզապէս սա կը նշանակէ, մուրալիսները մու- րալիսներն ի մուրալու են:

Ինձ այնպէս կը թուի թէ օրէնադիր պարտնները fumesterie մը ընելու օգուտ են ի վնաս այդ գոր- կեալներուն:

Տարին քանի մը հարկեր կամ հարկեր սակի առ- նող սրտաւորներուն այդ օրէնքն ալ ներքին չըլլայ:

Իսկ Փաշիքիները սրտաւորս գոհուր մ'ի իր տե- սակին մէջ, զրախ-գործոյ մը:

«Այն ուղքաւ մուրալիսները որ այս օրէնքին տրամադրութիւններէն պիտի չեղին, 100 լրուշի տու- գանքի պիտի դատապարտուին»:

Ալեքսանդրիայի, մուրալիսները հարկեր զրուշ տուգանքի դատապարտելու ուղքաւ ըլլանք ուրա- նալ, անոնց արժանապատուութեան դալի է:

Եթէ հարկեր գրուշ ունին, ուրեմն մուրալիսն չեն, հետեւաբար այդ օրէնքը մուրալիսներուն չի կրնար ըլլալ:

Non sens մը կայ այդ գործին մէջ: Եթէ պարզ- մտութեամբ եղած է սա ուրիշ, այս պարագային մէջն ալ ճիշդ այն աղեղնայութիւնը պիտի ընէ այդ պատիժը ինչ որ պիտի ընէր ներքինապետի մը եթէ պատժելու ուզելու համար ըսէր իրեն. — Քեզի կար- գուիլ արգիւստ է:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Պարսկաստանէն նորէն չփութութեան լուրեր կը հասնին : Մայիս 17/29ին Թէհրանի մէջ մուկաւմի Պարսիկներու խումբ մը մոլլա Ռէյմանօյլա անուն սէյիտի մը գողմամբ՝ հրէից թաղին վրայ յարձակելով, հալածեր ու տանջեր են զանոնք, ստիպելով որ մահմէտականութիւն ընդունին : 3000 հրէաներու մէկ երրորդ մասը այս կրօնափոխական սպառնալիքին հնազանդելով միայն կրցեր են ազատիլ խուժանի ձեռքէն, իսկ զիմադրող մասը սարսափելի չարչարանքներու ենթարկուելու է, մինչեւ որ իրիկուան կողմ, զեապաններու միջամտութեամբ, առերեսով խաղաղութիւն մը հաստատուելու է :

Երկու ամիս առաջ ալ, ինչպէս կը յիշուի, մուկաւմիական յարձակում մը կատարուած էր Թաւրէշի մէջ, հայերուն դէմ, որուն առաջը զփուարաւ կրցաւ առնել Ռուսիոյ հիւպատոսը :

— Հնդկաստանի մէջ ալ խռովութիւնները վերսկսեր են, այս անգամ աւելի ծանրակշիւ կերպով : Երեք օրէ ի վեր յաջորդաբար հասնող հեռագրեր կը ծանուցանեն թէ Կալկաթայի Շիքրաւ արուարձանին մէջ՝ չորեքշաբթի օրը մահմետական ժողովուրդը յարձակել է երոստացիներուն վրայ որոնցմէ շատեր վիրաւորուել են : Զինուորական զօրութիւնը միջամտել է : Խռովութիւնները հինգշաբթի առաւօտ կրկնուել են. զինուորները հարկադրուել են կրակ պարպել խուժանին վրայ :

— Թուրքահեղինական խնդրոյն և հաշտութեան կնքման մասին որոշ ու վերջնական լուր մը չի կայ : միշտ նոյն ելեւէջները պատերազմական տուգանքի քանակութեան վրայ ու նոյն հակասական արձագանքները, թեաւ զիման թողութեան կամ չի թողութեան նկատմամբ : Յուլիս 1 թուակիւր Հալապի հեռագրի մը նայելով՝ Պ. Բըրզըն Անգլիոյ Երեսփ. ժողովին ծանուցել է Տէրութեանց անմիջական ու կատարեալ համաձայնութիւնը Կրէտէի ինքնօրինութեան մասին :

— Կ. Պոլսէն Միլանի Սեֆօջ քաղաքին ուղղուած հեռագիր մը կըսէ. «Թրքական շրջանակներու մէջ կը կարծուի թէ Թերափնանտ իշխանը մտադիր է իշխանապետութիւնը անկախ և ինքնիշխան Պուլկարիոյ թագաւոր հռչակել : Այս է եղեր՝ ռահմանագլխին վրայ օմ. զօրաց համախմբման շարժումիւր Սուլթանը՝ այս պատահականութիւնը իրեն պատերազմի յայտարարութիւն մը նկատելով, ինքրոր է Տէրութիւններէն որ միջամտեն Սօֆիայի կառավարութեան մօտ, այս պետական հարուածն արգելելու համար» :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 29ին, Թիֆլիզի մէջ վախճաններ է Բարութիւն Գաբրիէլեան Իւզրաշեանց, անդաւակ, որ իւր ամբողջ հարստութիւնը՝ մօտաւորապէս 70,000 ռուբլի՝ կտակել է Ներսիսեան ուսումնարանին և զանազան բարեգործական նպատակներու : Հանգուցեալ լաւբերարի կամքին համաձայն՝ յուզարկաւորու-

թիւնը կատարուել է միակ քահանայով մը :

Երէկուան Բոկոնէ իտալական վերջին Սուրհանդակով աւանում թերթերէն կարտատուէ հետեւեալ հեռագիրը .

«Կ. Պոլիս, 26 յունիս. — Բաղմաթիւ «ձերականութիւններ կատարուեցան վերապարձող հայ գաղթականներուն մէջ՝ Պատրիարքը բողոքեց այս նոր հալածանքներուն դէմ» :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Խմբագրութիւնս իր շնորհակալիրը կը յայտնէ Պ. Մ. Փոթիճագալեանի Արմենիայի ու յաջորդութեան ու յարատեւութեան մագլաններով ոգջուած է Փաշուսի երեսմը :

Շնորհակալութիւն նայեալ Վասնայի Իրաւունքին ու Աթէնքի Միութիւնին՝ իրենց համակիր յիշատակութիւններուն համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ժանտախտի մասին Էլ-Քոր մաքլանոցէն նորագոյն տեղեկութիւնները՝ առաջին վայրկենի մտահոգութիւնները փարատելու ընտելութիւն ունին : Շիպիմ չողենաւով հասնող ճամբորդներէն հիւանդացած երկու անձերն ալ ապաքինելու վրայ են ու նոր դէպք չէ պատահած մաքլանոցին մէջ :

Ճիտաւէի մէջ՝ վերջին 24 ժամու միջոցին մէկ հոգի միայն բռնուած է ժանտախտէ ու մեռած :

— Աղեքսանդրիոյ անգլիական ընդհ. հիւպատոս Սըր Ջորջ Փաքսըն ու Եգիպտոսի երմաական նախարարութեան խորհրդական Սըր Էլվին Բալմըր չորեքշաբթի օրը Անգլիա ուղեւորեցան : Նախարարապետ Մուսթաֆա փաշա Գէհմի, միւս նախարարներն և ուրիշ բարձրաստիճան անձինք չողենաւ գային ողջերթի :

— Բարձր. Խաիֆն երէկ առաւօտ իր ներկայութեան ընդունեց Ֆրանսոյի գլխաւոր տական գործակալաւոր Պ. Կօկորտանը որ միջօրէին յետոյ մեկնեցաւ Մէսսաթրիի չողենաւով ի Ֆրանսա, ամառնային արձակուրդը անցունելու :

— Աղեքսանդրիոյ ելեկարական թրամուէյը պիտի սկսի լանիլ օգոստոս 1էն :

— Բամպակի հունձքը, թէ՛ վերին և թէ՛ ստորին Եգիպտոսի մէջ, լաւ արդիւնք կը խոստանայ այս տարի :

— Սուտանի արշաւանքին համար պատրաստութիւնները փութով առաջ կը տարուին պատերազմական պաշտօնատան մէջ :

ՄԻՋԱԿԻՆ Ե ԼԱԻԱԳՈՅՆ

Ֆրանսիոյ Սարսէ՝ Թանի նշանաւոր քրօնիկադիրը՝ իր մէկ յօդուածին մէջ հետեւեալ գեղեցիկ և չահեկան խորհրդածութիւնները բերած է Պառնաթոյի մահուան առթիւ, որմէ արժան գատեցինք հետեւեալ հատուածները քաղել :

Իր հատու և հեղինակալից գրչով այդ միջինատեղին կեանքը գծելէն վերջը, փորձ հրաշարակադիրը սապէս կը շարունակէ .

Ոսկի, սպանադի թագաւորը, այդ միջինատեղ Եւրոպայի ժողովուրդը, շատ փոթորկալից կեանք մը

ունեցած է : Շահադիտութեան խենդութենէ բըռնուած՝ շարունակ վարէն վեր ցտակըրտութեան ունէր. բնականաբար այս գորհուրէի հարուածները պիտի խախտէին իր իմացականութիւնը :

Մանրամասնութիւնները մեզի անձանօթ են. սակայն սա իրաւ է որ Պառնաթօ մեծութեանց իմացութեան խենդութեան հր հակառակ իր երեք հարիւր միլիոններուն :

Մեր գործը չէ զխոնալ թէ այդ 300 միլիոնները ինչ պիտի ունենան : Ինչ որ օգտակար է գիտել սա է թէ այդ տարօրինակ բազմը որ յեղափարծ կերպով այդ մարդուն զխոնալ վրայ կիշնար ոսկիէ ահագին կոմիտարի պէս, ո՛րքան անօգուտ — ինչ կըսեմ — ո՛րքան փառասկար, ո՛րքան աղէտաւոր եղաւ իրեն :

Անգագար չորջա կը խօսին երիտասարդներու վրայ որոնք կուզեն շուտ, մայրիկեանական կերպով մեծ գումարներ վատակել, հարուստ ըլլալ և որովհետեւ ինչ ժամանակուան մէջ՝ մեծագումար հարստութիւն մը ձեռք բերելու համար բազմաթիւ օրիջ հնար չկայ — բազմաթիւ իր ամեն ձեւին տակ — այնպիսիները կը խրոչին կանոնաւոր աշխատութենէ մը որ երկարժամանակեայ ջանքերով հաղիւ կրնայ համեստ գիւրակեցութեան մը տանիլ : Մեծ գումարներ կերպեն, զանոնք գրականելու հարց հարց կը մտածեն :

Շատեր կ'ըսեն .

— Սոսկ, հինգ հարիւր հազար ֆրանքնոյ աղջիկ մը դտնեմ նէ, ինչպէս կ'ըլլայ :

Ուրիշներ՝

— Սակարանի մէջ բարձրացում մը և ահա՛ ան զանաւորութեան մէջ իշխան մը կրնամ ըլլալ :

Կան այնպիսիներ ալ որ կերպեն երեսփոխան ընտրուիլ (այս ալ Ֆրանսոյի թագականութիւնն է) : Անգամ մը որ կընտրուին, անկից ետքը նախարար ըլլալը դիւրին է. և անգամ մը որ մարդ նախարար կ'ըլլայ, հարուստ ըլլալը բոնի մը օրուան խոնդիւր է :

Ամենին ալ մէկ փափագ ունին՝ շուտ հարստանալ ինչ բանի կը ծառայեն ոսկին, դրամը, որով պատիւներ և հաճոյքներ ծախու կառնուին, եթէ ձեռք պիտի անցունեն այն տարիքին մէջ ուր ալ մարդ տկայ չպիտի ունենայ ստակին բերած սրտաւնդը լայնելու համար : Այս մտածանիլը բարձրեւոր ամենին փառասկարներն են : Բայց որքան ուրիշներ ալ կան որոնց փառասկարութեան հրիգոնը նուազ ընդարձակ է, սակայն ստանալ ալ միևնոյն տենչերով կը շարժարուին : Օրինակի համար, այսինչը, որ շարժու գլուխ ձեռքը քանի մը բարայ կանցնի, ահա կը տեսնեն որ կերպից ձորաշաւներու մէջ գլուխներ դնել երբեք քիչ մը բարդաւոր կը վերադառնայ՝ և ծախսելու տեղուանքը քիչ կը գտնէ, բայց ընդհանրապէս ունեցածը այդ խաղին մէջ կը կորսնցնէ, զիմիկոր տուն կը գտանայ, մտմտուքը կ'առնէ, և բարկութիւնը ընտանեկան կոխներու մէջ կը մարէ :

Ուրիշ մը, անոյին, ծանոցումը մը խորուելով, բախտաւորութիւն մը կը յանձնէ իր ունեցած գրամը 0/0 12 տկոտ առնելու յոյսով, և օր մ'ալ կը տեսնէ որ իր վտառակի գրամապաշտ տներ բազէր է հեռը առնելով յաճախորդներուն տարուջ հարստութիւնը :

Աստի ալ միւսներուն պէս զփաղղ են, միշտ մտահոգութիւն մը կայ իրենց ուղեղին մէջ : Կը տատաղին, կը խենդենան :

Այս աշխարհիս վրայ երջանիկ ըլլալու համար մարդ մը երիտասարդութեանը նպատակ մը ընտրելու է իրեն և պիտի է այդ նպատակին համար : Պէտք է որ մենք մեզի բռնենք .

— Կամայ կամայ պիտի համարժ նպատակիս, շատ աշխատութեամբ և շատ չարժարանքով, բայց պիտի համարժ հակառակ ամին խաղնդտներու :

Սա ըսել կուզեմ թէ ընտրուած նպատակը բանաւոր ըլլալու է. այսինքն մեր կարողութենէն վեր չըլլայ, կարելիութեան սահմանին մէջ : Աւելորդ է ըսել որ եթէ դուք մտերմիկ գրած էք թէ երջանիկ ըլլալու համար անպատճառ հարիւր միլիոն ունենալու էք և կամ շատ մեծ արտեստագիւտ մը և կամ ֆրանսական շանրապետութեան նախագահ ըլլալու էք, կը վախճամ որ ձեռք փառասկարութեան չի հասնիր :

Ուրիշտա՛ ամեն բանի չափ մը կայ, ըսած է :

Այո՛, պիտի է մեր փափաքները չափաւորենք : Զեմ ըսեն թէ բնաւ փառասկարութիւն ունեն

նալու չէ, ընդհակառակը ատիկայ խթան մ'է գէտ ի յառաջդիմութիւն, բայց խեղճ ունենալու է գիտ, նալու համար թէ մեր իղձերը մինչեւ որ աստիճան կրնան ձգտել գէտ ի վեր:

Մեր փառասիրութեան շրջանակը կրնայ ընդ- լայնիլ որքան որ մեր գտնուած վիճակին մէջ բար- ւորումներ կը տեսնանք:

Այս օրուան յաջողութիւն մը իրաւունք կու- տայ մեզի վաղըւան համար ալ յաջողութիւն փնտը- ուելու: Փառասիրութիւնն ալ իր աստիճանաւորումը ունենալու է սանդուղի մը պէս:

Առջի ոտքէն էն վերինը ցատքել ուզելը յիմա- րի գործ է:

Մի' նախանձիք անոնցմէ որ յանկարծ բաղդա- ւոր կըլլան: Մեղքըքէր ընդհակառակը. ասոնք ընդ- հանրապէս գէշ վերջ մը կ'ունենան: Բաղդին տը- ւած ցնցումները կը խանգարեն անոնց միտքը ու հո- գին: Եւ դժուար է, հաւատալիք, բարձր վիճակէ մը աղքատութեան մէջ իյնալը. այսպիսիներ կամ խեն- դութեամբ և կամ ինքնապանութեամբ կը վերջա- ցընեն իրենց կեանքը:

Պատնաթօն թող' ձեզի օրինակ ըլլայ: Զափաւորութեան պէս խեղցի բան չկայ: Medio tutissimus ibis

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԵՒ

Ա Ջ Դ

Պատիւ ունինք ծանուցանել ընթերցասէր հա- սարակութեան թէ ընկերութիւնս բացած է մի բաժանորդագրութիւն իւր ժառանգարանի 4004 աւելի գրեանց ընթերցման համար հետեւեալ պայ- մաններով.

Ա.—Այն անհատ որ կուզէ ընթերցատունէս մէջ գիրք առնուլ ընթերցանութեան համար, կը վճարէ ամսական 5 դրշ ողջ, առած թուականէն սկսեալ և ընկերութեան գանձուն իրր աւանդ կը թողու զըբին մէկ ու կէս արժէքը, գիրքը վերա- դարձուցած միջոցին զայն վերստանալու պայմանաւ:

Բ.—Այն որ չնորոգէր իւր բաժանորդագրու- թիւնը, ամիսը լրանալէ յետոյ մինչեւ 15 օր, ըն- կերութիւնը կարողած կը նկատէ նոյնին տրուած գիրքն և կ'իւրացնէ ի փոխարէն թողուած աւանդի գումարն:

Գ.—Մէկ անձ կրնայ մէկ ամսոյ միջոցի մէջ քանի մը գրքեր առնուլ, պայմանաւ որ առաջին ա- ռածը վերադարձնէ ուրիշ մը ստանալու համար:

Դ.—Գործ. ժողովն իրեն կը վերապահէ կարգ մը գրեանց դուրս տալը արգիլելու իրաւունքը:

Ե.—Ընկերութեան անդամը ազատ են Ա. և Բ. յօդուածոց տրամադրութենէն, և կրնան ստա- նալ ուզած գրքերին առանց ու և է վճարման, զայն առ առաւելն մէկ ամիսէն վերադարձնելու պայմանաւ:

Դիմել առ Տեար Մ. Թուրքէնեան, Տնօրէն Ըն- թերցատանս, ամեն օր կէս օրէ յետոյ ժամ 4—6:

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանաց, սամուխի, մոր- քի և ջղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզօն Զահար, Շեքիթ Զօրէի ճիշդ դէմք. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւս- ձի կը դարմանուին:

ԲԻԻԶՈՆԴ ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հա- սարակութեան թէ Պազար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորա- կան գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովա- ցուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

3. ԵՒ 4. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԵ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵԹԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՅԳԻԱՆՈՒՐ ՄԵՐԵԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՄ» ԽԱՆԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԵԹՆԵՐՈՒ				
Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի				
"	Խըտիվեալ	"	2	" "
"	Պալատական	"	1 1/2	" "
"	Պօհճա	"	1 1/4	" "
"	Նաթիւրէլ	"	1	" "
"	Փօռ	"	20	Փրանք

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ գէմ բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԵՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5
Գահիրէ	մեկ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.
		4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	առաւ.	առաւ.	առաւ.
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	առաւ.	առաւ.	առաւ.
Թանթա	»	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	առաւ.	առաւ.	առաւ.
Տամանհուր	»	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54	առաւ.	առաւ.	առաւ.
Աղեքսանդրիա	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51	առաւ.	առաւ.	առաւ.
Աղեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50	առաւ.	առաւ.	առաւ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԵՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.		Կէս ուղ.	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5
Աղեքսանդրիա	մեկ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.	առաւ.
		—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	առաւ.	առաւ.	առաւ.
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	առաւ.	առաւ.	առաւ.
Թանթա	»	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	առաւ.	առաւ.	առաւ.
Պէնհա	»	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	առաւ.	առաւ.	առաւ.
Գահիրէ	»	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	առաւ.	առաւ.	առաւ.
Գահիրէ	»	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	առաւ.	առաւ.	առաւ.

ԳԱՀԻՐԵ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԵ

ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆԻ		ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէյ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	Երեկոյ	7 5
Զակադիկ)	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4		Զակադիկ)	ժամ.	3 7
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	»		մեկ.	3 17
		Սիւէյ կայարան	ժամ.		—	5 —	Պէնհա)
Տնք (բարափ)	ժամ.	6 55	—	»	մեկ.	4 17	
					Գահիրէ	ժամ.	5 5